

N 22-36
03.06.2022

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին.

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ ֆրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Խումբ) ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ առանձնազրույց են ունեցել ազատությունից զրկված մի քանի անձանց հետ.

1. Արամ Առաքելյան

Խմբի անդամներին Արամ Առաքելյանը հայտնել է, որ շուրջ 29 տարի է, ինչ ցմահ ազատազրկման է դատապարտված: 2022 թվականի փետրվարին առողջական վիճակը կտրուկ վատացել է (ստացել է սուր իշեմիկ կարված), տեղափոխել են հիվանդանոց և փետրվարի 21-ին կատարել վիրահատություն: Քներակը 2 սմ սզմված է եղել, արյունը ճնշվել է, խցանում է առաջացել, տրամբը պոկվել և անցել է գլխուղեղ: Ախտորոշվել է՝ գլխուղեղի արյան սուր իշեմիկ հիվանդություն: Դեռևս 2022թ. մարտին պաշտպանները դիմում են ներկայացրել, որպեսզի ՀՀ ԱՆ ֆրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ-ը բնակարկի պատժի կրման հետ անհամատեղելի հիվանդության հիմնով պատժից ազատվելու հարցը:

Միևնույն ժամանակ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ի կողմից 2021թ. դեկտեմբերին պայմանական ազատ արձակման վերաբերյալ դիմում է ներկայացվել դատարան, սակայն հիմնարկի կողմից իր վերաբերյալ 30.12.2021թ. տրված տեղեկանքում նշված է եղել, որ ինքը բրոնխիալ կանոնախախտումների հետևանքով հիվանդություն ունի, որն իրականությանը չի համապատասխանում, դիմել են հիմնարկին սխալը ճշտելու համար, ինչին ի պատասխան ֆրեակատարողական հիմնարկից տրամադրել են ՀՀ ԱՆ ֆրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ «Արմավիր» ստորաբաժանման ղեկավար Գ.Գեժոյանի կողմից 20.12.2021թ. տրված տեղեկանքի պատճենը, որտեղ նշված է եղել, որ ինքը բրոնխիալ կանոնախախտումների հետևանքով միջամտության շնորհիվ խնդիրը լուծվել է, սակայն ակնհայտ կեղծ տեղեկանք տրամադրելու համար որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել:

Վերագրյալի հիման վրա առաջարկում ենք.

1. Հետամուտ լինել, որ Բժշկական հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում և պատճեններն ֆինանսավորվող Արամ Առաքելյանի՝ պատժի կրմանը խոչընդոտող ծանր հիվանդության հիմնով պատժից ազատ արձակման հարցը և տրվի համապատասխան եզրակացություն:

2. Քննություն իրականացնել պարզելու, թե ինչպես կարող էր ՀՀ ԱՆ ֆրեակատարողական բժշկության կենտրոն ՊՈԱԿ «Արմավիր» ստորաբաժանման ղեկավարը անձի հոգեկան առողջության վերաբերյալ տրամադրել ակնհայտ կեղծ տեղեկանք:



2. Միջալե Մարտիրոսյան

Ցմահ ազատագրված դատապարտված Միջալե Մարտիրոսյանը Խմբի անդամներին հայտնել է, որ իրեն ցուցված է քրի միջնապատի վիրահատություն՝ պետապատվերի Երջանակներում: Հերթագրել են, սակայն տեղեկություն չունի, թե վիրահատությունը երբ կլինի: Բողոքում է, որ ունի գլխացավեր: Վերջերս պարզել է, որ ունի Հեպատիտ C, սակայն բուժում չեն նշանակել, հայտնել են, որ բուժման գործընթացի մեջ առայժմ ներգրավված են «Նուբարաբեկ» և «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներում պահվող անձինք: Նաև ասաց, որ ինքը տեղյակ չի եղել, որ վարակվել է Հեպատիտ C-ով, ուրիշ է, 2019 թվականին համապատասխան հետազոտություն կատարվել է, սակայն հայտնել է, որ հետազոտության անցկացման ձևն այնպիսին է, որ հնարավոր չէ անմիջապես տեղեկանալ արդյունքների մասին: Փոքր սենյակում մի քանի բժիշկ միանգամից ընդունում են բազմաթիվ դատապարտյալների, կատարում են արյան նմուշառում, սակայն քանի որ սենյակում թառ են լինում, այդ չեն կարող ամիջապես հայտնել արդյունքները, ասում են՝ գնացե՛ք, հետո կհայտնենք, սակայն այդպես էլ չեն տեղեկանում: Մինչ այդ հետազոտությունը, պարբերաբար հետազոտություններ անցել է, սակայն Հեպատիտ չի հայտնաբերվել, չի բացառում, որ վարակը վախճանցվել է ազատագրված վայրում՝ բժշկական ներարկումների կամ ատամնաբուժական սարքերի միջոցով, ուրիշ է, որ ՀՀ ԱՆ «Նուբարաբեկ»-ի ատամնաբույժը գործիքները չէր փոխանակում:


Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք

1. Քննարկել Միջալե Մարտիրոսյանի քրի միջնապատի վիրահատությունը պետապատվերի Երջանակներում կազմակերպելու հարցը:
2. Տրամադրել ժամանակացույց, թե երբ են ՀՀ ԱՆ բուժար քրեակատարողական հիմնարկները ընդգրկվելու Հեպատիտ C-ի բուժման ծրագրում:
3. Տեղեկացնել ի՞նչ գործողություններ են իրականացվել ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում (մայր թվում՝ մասնագիտական անփութության հետևանքով) Հեպատիտ C-ով վարակման դեպքերը կանխելու համար:

3. Հակոբ Խաչատրյան

Ցմահ ազատագրված դատապարտված Հակոբ Խաչատրյանը Խմբի անդամներին հայտնել է, որ շուրջ 11 ամիս առաջ նշանակված է եղել ստորին վերջույթների դուպլեքս հետազոտություն՝ պետապատվերի Երջանակներում, սակայն վերջերս տեղեկացրել են, որ այդ հետազոտությունը պետապատվերի Երջանակներում այլևս չի կատարվում:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք քննարկել Հակոբ Խաչատրյանի ստորին վերջույթների դուպլեքս հետազոտությունը պետապատվերի Երջանակներում կազմակերպելու հարցը:



Հիշյալ հարցերի վերաբերյալ բուժապասարկման հետ կապված հիմնավորումներ ստանալ հնարավոր չի եղել, քանի որ ժամը 11:20-ի դրությամբ ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Արմավիր» ՔԿՀ-ի ստորաբաժանման պետ Գծոյանը դեռևս աշխատանքի չէր ներկայացել:

4. Արտակ Ալեֆյան

Խմբի անդամներին ցմահ ազատազրկման դատապարտված Արտակ Ալեֆյանը հայտնել է, որ Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ իր ուղղիչ հիմնարկի տեսակը կիսափակից փոխվել էր կիսաբացի, սակայն 2021 թվականին դատախազության հիշյալ որոշման կասեցման պատճառով իր ուղղիչ հիմնարկի տեսակը կիսաբացից կրկին փոխվել է կիսափակ: 2022 թվականին արդեն 3 անգամ դատախազության կողմից կասեցվել է Տեղաբաշխման հանձնաժողովի՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ որոշումը և մեկ տարվա ընթացքում 3 անգամ կիսափակից տեղափոխել են կիսաբաց և նույնքան էլ կիսաբացից տեղափոխել են կիսափակ քրեակատարողական հիմնարկ:

Խիդերն ընդդեմ Ֆրանսիայի գործով (*Khider v. France 09.07.2009 (Nº 39364/05)*) Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել էր Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում: Հիշյալ գործով դիմումատուն գանգատվում էր պահման պայմանների և իր դեմ կիրառված անվտանգության միջոցների դեմ որպես «հատուկ հսկողության պահանջող ազատազրկվածի»: Մասնավորապես նա գանգատվում էր բազմաթիվ տեղափոխություններից մի բանտից մյուսը, ինչպես նաև մեկնախցում երկարատև գտնվելուց: Հիշյալ գործով Դատարանն արձանագրել էր, որ Խոստանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտեն Ֆրանսիայի վերաբերյալ իր 2007 զեկուլցում մատնանք էր ազատազրկվածի՝ մի բանտից մյուսը շարունակական տեղափոխությունների վնասակար հետևանքների մասին: Այդ կերպ, թեև տեղափոխությունը կարող էր անհրաժեշտ լինել բանտում անվտանգության ապահովման և փախուստը բացառելու համար, սվյալ գործով դիմումատուի հաճախակի տեղափոխություններն ըստ էության շատ էին արդարացված: Բացի այդ, դրանք կարող էին դիմումատուի մոտ առաջացնել անհանգստության բարձր զգացողություն՝ հաշվի առնելով աղապատացումը տարբեր բանտերում:

2022թ. ապրիլի 13-ի ԹԻՎ ՎԴ/0571/05/22 վճռով ՀՀ վարչական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Տվյալ իրավիճակում, ինչպես նշվեց վերը, Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը և Կարգի 12.2 կետը բավարար հստակ չեն և չեն լուծում խնդրո առարկա այն հարցը, թե դատախազի կողմից վերանայման միջնորդագիր ներկայացնելուց հետո հանձնաժողովի կողմից իր որոշումն անփոփոխ թողնելու դեպքում դատախազն իրավասու է արդյոք նորից հանձնաժողովի որոշման կասեցման և վերանայման միջնորդագիր ներկայացնելու որոշում կայացնել: Եթե դատարանն ընդունի պատասխանողի մեկնաբանությունը և համարի, որ դատախազը սահմանափակված չէ հանձնաժողովի կողմից իր որոշումն անփոփոխ թողնելու դեպքում նորից հանձնաժողովի որոշման կասեցման և վերանայման միջնորդագիր ներկայացնելու որոշում կայացնել, կիսափակ իրավական որոշակիությունն ու կանխատեսելիությունը:

Այսպես, եթե տեղաբաշխման հանձնաժողովը Օրենսգրքի 101-րդ հոդվածի և 102-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա որոշում է ավելի խիստ տեսակի ուղղիչ հիմնարկից տեղափոխել դատապարտյալին կիսաբաց ուղղիչ հիմնարկ, դատախազը Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի հիման վրա որոշում է կասեցնել հանձնաժողովի որոշումը և միջնորդել այն վերանայել, սակայն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԵՐԻ ԽՈՒՄԲ

հանձնաժողովը մնում է իր կարծիքին և Կարգի 12.2 կետի հիման վրա թողնում է իր որոշումն անփոփոխ, դատապարտյալի մոտ առաջանում է լեգիտիմ ափսոսանք, որ նա պետք է տեղափոխվի կիսաբաց ուղղիչ հիմնարկ: Որևէ իրավական նորմից դատապարտյալի համար չի կարող կանխատեսվել լինել, որ դրանից հետո դատախազը նորից կարող է չհամաձայնվել հանձնաժողովի որոշման հետ, և գործընթացը նորից կարող է հայտնվել Երջապտույտի մեջ: Հատկանշական է, որ տեղաբաշխման հանձնաժողովը հատուկ մասնագիտական մարմին է, որին վերապահված է ուղղիչ հիմնարկի տեսակը որոշելու լիազորությունը, իսկ դատախազը միայն հսկող գործառույթ է իրականացնում և խնդիր հայտնաբերելու դեպքում միջնորդում է հանձնաժողովին վերանայել իր որոշումը, սակայն վերջնական որոշումը հանձնաժողովինն է»:

Թեև հիշյալ որոշումն բողոքարկվել է դատախազության կողմից և դեռևս չի ստացել օրինական ուժ, այնուամենայնիվ գտնում ենք, որ Տեղաբաշխման հանձնաժողովը պետք է էլնի անձի՝ Սահմանադրական իրավունքների իրացման տեսանկյունից (որպես անմիջականորեն գործող) և բնության առարկա չդարձնի դատախազության՝ Հանձնաժողովի որոշումները կրկին անգամ կասեցնելու և վերանայման միջնորդագրի ներկայացնելու վերաբերյալ:

Հ.Գ.

- Դեռևս խիստ մտահոգիչ է ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Արմավիր» ՔԿՀ-ի ստորաբաժանման կողմից տրամադրվող բուժժառայության որակը, ինչի մասին խումբը բազմաթիվ հաշվետվություններում ներկայացրել է իր մտահոգությունները, հիշյալ քրեակատարողական հիմնարկում ազատագրված անձանց առողջական խնդիրները շարունակում են խորանալ, այնպիսի տպավորություն է, որ ՀՀ ԱՆ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը չի տիրապետում իրավիճակին:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան